Արձանագրություն N 2

ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(17/1Մ) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար ամենագնաց ավտոմեքենայի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26 դեկտեմբերի 2017թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արման Միրզոյանը, անդամներ՝ Մաքյան Լուսիկը, Ավոյան Համլետը և քարտուղար՝ Վարդան Նավասարդյանը հայտ ներկայացրած «Վեկար» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչը:

Օրակարգ

ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(17/1Մ) ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(17/1Մ) ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Միրզոյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

-հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը	
	«Վեկար» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Տիգրանյան 1 փակ 1	
	Գնային առաջարկը ՀՀ դրամ	
	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ն ներառյալ
1	4 958 333	5 950 000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտ պարունակող ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան.
- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան.

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտի գնահատումը իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացրած գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«Վեկար» ՍՊԸ-ին՝**
  - 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 1-ին չափաբաժնի մասով:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում «Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ ներկայացնել ՆՄՄԴ-ԳՀԱՊՁԲ-(17/1Մ) ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերի հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ք.Երևան, Նուբարաշեն 6-րդ փողոց, 2-րդ շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Արման Միրզոյան

անդամներ _____ Լուսիկ Մաքյան

_____ Համլետ Ավոյան

քարտուղար _____ Վարդան Նավասարդյան